Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ՊԱՏԱՐԱ



ԵՐԵՎԱՆ 2006

ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ՊԱՏԱՐԱ

ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՅՈՒՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 941 (479.25) : 008
ԳՄԴ 63.3 (2Հ) + 71
Ս 286

Տպագրվում է ԼՂՀ ԿՄՍ նախարարության
հուշարձանների պահպանության և ուսումնասիրման
բաժնի գիտական խորհրդի որոշմամբ

Ս 286 **Պատարա:** Ս. Սարգսյան, Յու. Առաքելյան:
Եր., Զանգակ–97, 2006, – 24 էջ + 20 էջ կավճ. ներդիր:

Ս $\frac{0503020913}{0003(01)–2006}$ 2006 թ. ԳՄԴ 63.3 (2Հ) + 71

ISBN 99941–1–208–2

© Ս. Սարգսյան, 2006 թ.
© «Զանգակ–97», 2006 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործում մեծ նշանակություն ունի քարոզչությունը, որի միջոցով պայմաններ ու հնարավորություն են ստեղծվում առավել մոտիկից հաղորդակից լինելու մեր ազգային արժեքներին, դրանով իսկ խթանելու նաև զբոսաշրջությունը Արցախ երկրամասում՝ նպաստելով հանրապետության բարգավաճմանը: Հուշարձանների պահպանության խնդրի լուծումը պահանջում է նաև դրանց մանրակրկիտ ուսումնասիրություն՝ հայ մշակույթը հանրությանը ճշմարտացի ներկայացնելու համար՝ հակազդելով ադրբեջանական քարոզչությանը՝ Արցախը ադրբեջանական տարածք, իսկ հայերին երկվոր համարելու՝ պարբերաբար սաստկացող զառանցանքները:

Ներկայացվող այս փոքրիկ գրքույկում զետեղված են տեղեկություններ մեր հայրենիքի՝ Արցախ աշխարհի մի փոքրիկ հատվածի՝ Պատարա գետահովտի հուշարձանների մասին, որոնց թիվը, ըստ վերջերս կատարած հաշվառման աշխատանքների, անցնում է 200–ից: Դրանք պահանջում են առավել մեծ ուշադրություն, պահպանության գործի բարելավում և ժամանակակից պահանջներն ու չափանիշները բավարարող միջոցառումների իրականացում:

Տարածքի ֆիզիկաաշխարհագրական պայմաններն ու աշխարհագրական դիրքը հնարավորություն են տալիս հուշարձանաշատ այդ գետահովտում ստեղծելու բնապատմական արգելոց, որը հնարավորու-

թյուն կտա լուծելու ոչ միայն հուշարձանների, գեղատեսիլ բնության ու կենդանական աշխարհի պահպանության գործը, այլև կնպաստի Արցախի միջազգային ճանաչմանը:

Նկատի ունենալով վերոհիշյալը և օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ ներկայացնելու գետահովտի հուշարձանները՝ առաջարկում ենք ներկայացվող տարածքը հռչակել բնապատմական արգելոց՝ «Կուսանաց» անվամբ, որի սահմանները ճշտվել են տեղում մեր կողմից՝ կազմվելով համապատասխան քարտեզներ:

Գրքույկում, բացի կատարած ուսումնասիրություններից, օգտագործվել են նյութեր այլ հրապարակումներից (Ս. Կարապետյան, Ս. Մարգսյան):

* * *

Ուսումնասիրվող տարածքը ներառնում է ԼՂՀ Ասկերանի շրջանի Պատարա գյուղի արևմտյան հատվածը՝ Ղարաբաղյան լեռնաշղթայի Կուսանաց լեռնահատվածի և նրանից ծյուղավորվող Հավքախաղաց ու Խոյխութ լեռնաճյուղերի միջև՝ Պատարա և Պիծի գետերի վերնամասերը, որոնք մտնում էին Պատմական Հայաստանի Արցախ նահանգի Մեծառանք (Խաչեն) գավառի սահմանների մեջ: Մակերևույթը լեռնային է: Այստեղ են գտնվում լեռնաշղթայի ամենաբարձր՝ Կուսանաց լեռները, որոնց առանձին գագաթներ անցնում են 2800 մ բարձրությունից (Մարիամ–2832 մ, Գայանե–2823 մ և այլն): Լեռնաշղթայի որոշակի հատվածներ տեղ–տեղ ցածրանում են և գոյացնում մի շարք լեռնանցքներ:

Գտնվելով Վիրահայոց–Ղարաբաղյան տեկտոնական անտիկլինալային կառույցի վրա՝ Կուսանաց լեռների արևմտյան և արևելյան լանջերը մասնատվել են ջրահոսքերի հետևանքով՝ առաջացնելով խոր գետահովիտներ: Լեսնոյ (Ղարպասուտ) նախկին բնակավայրի մոտ՝ Պատարա գետի ակունքից 12 կմ հեռավորության վրա, տեղանքն ունի 940 մ ծովի մակերևույթից բարձրություն: Նշենք, որ գետի ակունքները գտնվում են ծովի մակերևույթից 2620 մ բարձրության վրա: Ղարաբաղյան լեռնաշղթայի այս հատվածն առաջացել է բարդ երկրաբանական երևույթների հետևանքով: Տարածքը կազմված է միջին և վերին յուրայի հասակի ապարներից (կրաքարեր, ավազաքարեր, պորֆիրիտներ, դիաբազներ, տուֆիտներ և այլն), որոնք վերին կավճի և կայնեզոյի դարաշրջանում ենթարկվել են Ալպ–Հիմալայան լեռնակազմական պրոցեսներին: Որոշ տեղամասեր բեկորատվել են՝ առաջացնելով ատամնավոր ժայռային մերկացումներ: Լեռնաշղթային զուգահեռ անցնում են տարբեր կարգի տեկտոնական խզվածքներ, որոնք իրենց հետքն են թողել ռելիեֆի վրա՝ լանջերի մակերևույթին առաջացնելով աստիճանակերպ դարափուլեր: Այդ են վկայում նաև տարածքում գտնվող մի քանի ջրվեժները (Շռշռան, Պյուլուր

ծով, Կռակլավեն, Խրավանդ և այլն): Հաճախ հանդիպում են տեկտոնական խախտման գծերի ուղղությամբ ձգվող սողանքներ և փլվածքներ (Եղցեն գյոլ, Քեթևանեն, Դերին թալա, Սեփանց տանձոտ, Ուզուն տեղեր սողանքները, Քշկոռտեն քարաթափվածքները):

Կուսանաց լեռնաշղթայից դեպի արևելք գետի էրոզիոն գործունեության հետևանքով առաջացել են Կենդակ տան, Էրգան, Միջնակ, Կարճ, Տեղեն մաննը կարճ ու զառիթափ լեռնաբազուկները: Հավքախաղաց լեռնաճյուղից դեպի հարավ առանձնանում են Ծուվեն խութ, Խրավանդ, Օհանանց, Քրքոնանց և Եղցուն խութ երկարաձգված լեռնաբազուկները, իսկ Խոյխութից դեպի Պատարայի գոգավորություն իջնում են Մթնաձորի, Օխտը եղցու, Ուզուն տեղերի, Պյորթի (բերդի), Հուռունց թումբի կարճ ու զառիթափ լեռնաբազուկները, որոնք ջրբաժան են Պատարա գետի վտակների համար: Նշված տարածքում լայն տարածում ունեն կարստային երևույթները, որոնք ռելիեֆում արտահայտվում են ձագարաձև գոգավորություններով, կարստասողանքային փլվածքային ձևերով, անգամ քարանձավներով (Սև քարեն, Քրքոնանց, Որվանեն, Պնջրոտեն, Ծրտոտ, Հաչաժայռի, Արջենքարեն, Մատուռեն, Տըփը կարան, Զոռաբադուն կարան և այլն): Այս տարածքում դիտվում է մի հետաքրքիր երևույթ ևս: Արտաքին ուժերի ազդեցությամբ, որոնք ձգտում են համահարթեցնել երկրի մակերևույթի խորդուբորդությունները, 1300–1350 մ բարձրությունների վրա առաջացրել են համահարթեցման մակերևույթներ:

Լեռնային ռելիեֆի շնորհիվ կլիման այստեղ աչքի է ընկնում վերընթաց գոտիականությամբ: Արևափայլի տևողությունը Դարպասուտ կոչվող տեղամասում 1700–1800 ժամ (տարի) է, իսկ Կուսանաց լեռների բարձրադիր մասերում 2000–2100 ժամ (տարի), առավելագույնը՝ հուլիսին 300 ժամ: Միջին տարեկան ջերմաստիճանը ուսումնասիրվող տարածքում կազմում է ցածրադիր շրջաններում 10 °C, բարձրադիր գոտում՝ 4 °C: Օգոստոսին օրական միջին ջերմաստիճանը տատանվում է 24 °C (գոգավորության հատակում) մինչև 8–10 °C (Կուսանաց լեռներում), իսկ նվազագույն ջերմաստիճանը դիտվում է հունվար ամսին –2–10 °C (բարձր լեռներում): Քամու ուղղությունը համապատասխանում է լեռնային հովիտների ուղղությանը (1.5–3 մ/վ): Տեղումների մեծ քանակություն թափվում է բարձր լեռների մերձգագաթային մասերում՝ 800–900 մմ, իսկ Պատարայում՝ 700 մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է գարնանը հորդառատ անձրևների տեսքով:

Ուսումնասիրվող տարածքում գետային ցանցը բավականին խիտ է: Այստեղ նշանավոր է Պատարա գետը իր Պիծի, Խրավանդ և այլ վտակներով, որոնց վրա հայտնի են ջրվեժներ և հունի լայնացած տեղամասեր, որոնց տեղացիները անվանում են ծով (Կրքքարեն ծով, Սև ծով, Սալուն ծով, Կապեն ծով, Պուլուր ծով, Սիրինեն ծով և այլն): Դրանք դարձել են ոչ միայն պատարեցիների, այլ արցախցիների սիրելի վայրերը: Տարածքում հայտնի են բազմաթիվ աղբյուրներ: Հայտնի են Կապեն ծովեն, Ղազարանց կալին, Տանձոտեն, Ցորտ աղբյուրեն, Սորփին, Փրկիչին, Վարար ճիրին, Շահեն սեռեն, Կերեզմանոտեն, Շենիտեղերեն և այլ աղբյուրները: Շռշռան ջրվեժի մոտ է գտնվում Պատարա հանքային աղբյուրը: Գետավազանի այս հատվածը անտառածածկ է, որը կազմում է տարածքի 91 %–ը:

Անտառում տիրապետում են բոխին, հաճարենին և կաղնին, որոնց հետ՝ թխկին, լորենին, հացենին, ղաժին և բազմաթիվ պտղատուներ՝ ընկուզենին, տխլենին, հոնին, զկեռենին, խնձորենին, տանձենու տեսակներ, սալորենին: Այստեղ հանդիպում են նաև եզակի բուսատեսակներ (փշարմավ, սոսենի, կեչի): Բավականին մեծ է այն բուսատեսակների քանակը, որը արցախցին օգտագործում է սննդի մեջ (մոտ 100 տեսակ բույսեր և 50 տեսակ սնկեր): Որոշ խոտաբույսեր օգտագործվում են որպես թեյ: Մեծ թիվ են կազմում դեղաբույսերը: Միևնույն ժամանակ կարելի է հանդիպել նաև բուսատեսակների, որոնք գտնվում են անհետացման եզրին:

Կենդանական աշխարհն այս տարածքում բազմազան է: Հանդիպում են իրանական, փոքրասիական և կովկասյան կենդանատեսակներ: Բնորոշ են անտառային միջավայրում ապրող կենդանիները: Առավել տարածված են գիշատիչներից՝ արջը, գայլը, լուսանը, չախկալը (շնագայլ), կզաքիսը, աղվեսը, անտառակատուն, կճղակավորներից՝ այծյամները, բեզուարյան այծը, որոնք, դժբախտաբար, գտնվում են ոչնչացման եզրին (մինչև 50–ական թվականները տարածված էին նաև ազնվացեղ եղջերուները): Կան նաև վայրի խոզեր, վայրենակերպ (դեկոբրազ), փորսուղ, ոզնի, սկյուռ:

Միջատակերներից հանդիպում են սրնչակը և խլուրդները: Թռչուններից տարածված են փայտփորիկները, մոշահավերը, անտառային կաչաղակները, պիրոլը, կկուն, չարդը, վայրի աղավնին, փասիանը (միրհավ), սոխակները, գիշատիչներից արծիվը, անգղը, բազեն, բուն, բվեճը: Կուսանաց լեռների բարձր գոտում հանդիպում է ուլարը (լեռնային հնդկահավ), իսկ գետերում՝ քիչ քանակությամբ ձկնատեսակներ

(գետաձաձան, բեղլու, կողակ), որոնց քանակը ներկայումս բավականին նվազել է, իսկ որոշ տեսակներ գտնվում են անհետացման եզրին:

Միջնադարում Պատարայի գետահովտի ավազանը խիտ բնակեցված է եղել: Այդ են վկայում բազմաթիվ գյուղերի ավերակներն ու եկեղեցիները, վանքերն ու գերեզմանոցները՝ ծածկված խիտ անտառներով ու թփերով: Բնակատեղիների որոշակի տեղաբաշխվածությունից պարզվում է, որ գետի միջին և մանավանդ վերին հոսանքի հատվածները, որտեղ տեղանքը պաշտպանության տեսակետից առավել հուսալի էր, ավելի խիտ է բնակեցված եղել: Պատարա գյուղից գետի հոսանքով վեր՝ թավուտ անտառներում պահպանվում են մեկ տասնյակից ավելի գյուղատեղիներ և մի շարք ճարտարապետական ուշագրավ կոթող–համալիրներ, որոնք լուրջ ուսումնասիրության չեն ենթարկվել: Գետահովտի պատմաճարտարապետական հուշարձանների մասին տեղեկություններ են հաղորդել տարբեր հեղինակներ (Մ. Բարխուտարեանց, Ս.Կարապետյան, Շ. Մկրտչյան, Ս. Սարգսյան):

Առաջին խոշոր հնավայրը, որ հայտնի է ՕԽՏԸ ԵՂՑԻ (յոթ եկեղեցի) անվամբ, գտնվում է Պատարա գյուղից մոտ 7 կմ հարավ–արևմուտք՝ համանուն գետի աջ կողմում՝ գետափից մոտ 1,2 կմ հեռավորության վրա՝ բարձր, անտառածածկ բլրի հարավահայաց լանջին (ներկայիս Լեսնոյ գյուղատեղիից հր–ար): Տեղանքն ունի հրվանդանի ձև: Այստեղ պահպանվում են կանգուն, կիսավեր կամ հիմնահատակ ավերված 12 տարբեր շենքերի մնացորդներ: Ելնելով հնավայրի Օխտը եղցի անվանումից՝ տարբեր կարգի շենքեր վերագրվել են վանական համալիրին: Սակայն իրականում համալիրը բաղկացած է երեք հիմնական եկեղեցիներից, որոնցից մեկը կանգնած է առանձին, մյուս երկուսը՝ միմյանց կից: Վերջիններիցս արևելյանը հյուսիսից ունի ավանդատուն, իսկ հարավ–արևելքից նրան կից է մի փոքրիկ մատուռ: Գլխավոր կամ մեծ եկեղեցուն հյուսիսից կից է տապանատան թաղածածկ շենքը: Համալիրի հարավարևելյան ծայրում ուղղանկյուն հատակագծով շինությունը, հավանաբար, ծառայել է որպես գավիթ և արևմուտքից ունի մուտք: Նման մի այլ շենք, որի մուտքը բացվում է արևելքից, կիսավեր վիճակում պահպանվում է մեծ եկեղեցուց հարավ–արևմուտք: Հիմնահատակ ավերված երկու այլ շենքերի մնացորդներ են պահպանվել համալիրից 6–7 մ հեռավորության վրա: Դրանցից արևմուտք տարածվում է խաչքարերով հարուստ գերեզմանոցը, ուր ևս նկատվում են երկու տարբեր շինությունների մնացորդներ: Այսպիսով՝ հուշարձանախմբի Օխտը եղցի

անվանումը զուտ ժողովրդական է: Տեղում պահպանված 12 արձանագրություններից և ոչ մեկում, ցավոք, չգտնվեց այս հուշարձանախմբի իսկական՝ հնագույն անվանումը: Հուշարձանախմբում շենքերի դասավորությունն ունի հետաքրքիր լուծում: Այսպես՝ երկու միմյանց կից հնագույն եկեղեցիների և դրանցից արևելք ընկած երկու ուղղանկյուն հատակագծերով շինությունների մուտքերը բացվում են մի փոքրիկ հրապարականման տեղում, որը, հավանաբար, բակի նշանակություն է ունեցել: Այդ փոքրիկ մակերեսն արևելքից զարդարում են կողք կողքի կանգնած խաչքարերը, որոնցից մեկն ունի 1185 թ. արձանագրություն: Եկեղեցիների հորինվածքային կարևոր առանձնահատկությունն ուղղանկյուն բեմն է: Ավագ խորանի այդ կերպ լուծումը բավականաչափ տարածված և ընդունված է Արցախի հայ պաշտամունքային ճարտարապետության մեջ: Եկեղեցիները կառուցված են անտաշ ու կոպտատաշ տեղական քարերով ու կրաշաղախով: Շենքերից և ոչ մեկը ամբողջությամբ չի պահպանվել: Եկեղեցիների ներսում պահպանվում են ծեփի հետքերը: Համալիրի գլխավոր և նրան կից եկեղեցու հարավային ճակատներում, պատի մեջ ագուցված են մինչև X դ. բնորոշ զարդաքանդակներով խաչքարերի կտորներ: Տապանատան շենքը, որը միակ ամբողջական կանգուն շինությունն է համալիրում, տեղադրված է գլխավոր եկեղեցու հյուսիսային կողմում: Շենքի ներսում արևելյան պատի տակ եղել է չորս խաչքար, որոնցից մեկն է միայն տեղում, որն ի դեպ ունի թվակիր ամենահին արձանագրությունը:

Խաչքարը կերտված է սպիտակ կրաքարից և ներկված է եղել կարմիր ներկով: Խաչի ստորին մասում պատկերաքանդակների շուրջը 10–տողանոց արձանագրություն է՝ 1158 թվագրությամբ.

ԹԻԻ	ՈՅ ԻՄՈՅ ԴԱԻ
ՈԷ /1158/: ԷՐ: ԵՍ Ս	ԹՈՆԻՍ ՈՐ ԿԻՍ
ՄՊԱՏ ՈՐԴԻ	ԱԻՐԵԱ ՓՈԽ
ՎԱՍԱԿԱ ԿԱՆ	ԵՑԱԻ Ի ՔՍ:
ԳՆԵՑԻ ԶԽ	
ԱԶՍ ՈՐԴ	

Խաչքարի ստորին կենտրոնական մասում կա երկուտողանոց արձանագրություն. ՍՄՊԱՏ ԻՇԽԱՆ ՈՐ ՑԻ (ՇԵՑԷՔ):

1163 թ. մի խաչքար, որ ջարդվել ու բաժանվել է երեք մասի, գտնվում է առանձին կանգնած եկեղեցուց 2 մետր հարավ, որի բեկորներից մեկի վրա պահպանվել է արձանագրության մանրամաս և հեծյալի քանդակ.

ԹԻԻՆ ՈԺԲ /1163/ ԷՐ, ԳԱԳԻԿ ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱ ԹՈՌՆ.....

Մեկ ուրիշ խաչքարի վրա, որ ընկած է առանձին կանգնած եկեղեցու մուտքի մոտ, կա 1165 թ. արձանագրություն.

Ի ՈԺԴ /1165/ԹՎԱԿԱՆ/ԻՆ/ ԿԱՆԳՆԵՑԱ ԽԱՉՍ Ի ՏԱՊԱՆԻ ՀԱՍԱՆԱ ՈՐ/ԴԻ/ ԱԿ.... ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԱՂԱԻԹՍ Յ /ԻՇԵՑԷՔ/:

Գավթի արևմտյան ճակատին դրսից ագուցված են խաչքարեր, որոնցից մեկի վրա փորագրված է.

ԹԻ /Ի/ Ն Ո
ԼԴ /1185/
ԷՐ:
ԵՍ /Ս/ ԱՐԳԻՍ
Ս ԿԱՆԳՆ
ԵՑԻ ԶԽԱՉ
Ս Ի ՓՐԿՈՒԹ...

Խաչի ստորին հատվածի արձանագրությունը դժվարընթեռնելի է, նրա վրա նկատելի է ԱՂԱԻԹՍ բառը: Այդ խաչքարը ևս վերաբերում է XII դ. երկրորդ կեսին (1185 թ.).:

Տապանատան մուտքի դիմացի ջարդված խաչքարի ստորին մասում հեծյալի քանդակ է, շուրջը՝ 1193 թ. արձանագրություն.

ԹԻԻ ՈԽԲ /1193/ ԵՍ ԽՈՐ
ԻՇԱՀ ԿԱՆ /ԳՆ/ ԵՑ
Ի ԶԽ
ԱՉՍ Ի
/ՏԱ/ ՊԱՆՈ
ՎԱՐՀԱՄԱ:

Առանձին կանգնած եկեղեցուց մետ 8 մ արևելք գտնվում է 1203 թ. արձանագրությամբ մեկ ուրիշ խաչքար, որի ստորին մասում հեծյալի քանդակ է, շուրջը՝ 9 տող.

Թ /ԻԻ/ ՈԾԲ ԷՐ /1203 թ./
ԵՍ ՎԱՐՀ
ԱՄ ԿԱՆԳ
ՆԵՑԻ Զ
ԽԱՉՍ
ՀԱԻԵՏ
ԻՔԱՑ
ՅԱՂԱ
ԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ:

1216 թ. արձանագրությամբ երկու խաչքարերից մեկը, որ գտնվում է բակի հարավային ծայրում կոտրված է, իսկ երկրորդը՝ համալիրից մոտ 80 մ արևմուտք՝ մի բարձունքի վրա, որի մոտ նկատվում են շինության հիմնապատերը: Առաջին խաչքարի արձանագրությունը հետևյալն է.

Թ:Վ: ԱԿ: ԱՆ:Ո: Կ:Ե: /1216/:
ԷՐ ԵՍ ՀԱՅՐԱՅՊԵՏ
ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉ
Ս ԻՄ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՄԲՍ ԲԱՐԵԽԱԻՍԻՆ:
ԱՌՀԱ.....Ն.....ՈՐԴԻՆ ՄԻԱԾԻՆ:

Հուշարձանախմբից արևմուտք՝ գերեզմանոցում գտնվող խաչքարի վրա, կարդում ենք.

Ի ՈԿԵ /1216/ Թ
ԻԱԿԱՆԻՍ ԵՍ ՎԱՍԱ
Կ ՈՒ ՀԱՍԱՆ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ
Ի ՏԱՊԱՆԻ ՀԱՒՐ ՄԵՐՈՑ ՄՈԶԻ ՈՐ...

1225 թվագրությամբ մի խաչքար էլ ագուցված է գլխավոր եկեղեցուն հարավ–արևմուտքից կցված ուղղանկյուն հատակագծով շենքի արևելյան պատի մեջ, որի վրա՝

ԹԻԻ:
Ո:Հ:Դ:
ԷՐ:

Խաչի ստորին մասում փորագրված են հեծյալի քանդակ և քայքայված ու անընթեռնելի արձանագրություն: Նույն շինության ներսում՝ 1237 թ. խաչքարի ստորին մասում, պահպանվել է հինգտողանոց արձանագրություն.

Թ ՈՉՉ /1237/.
ԵՍ ՄԱՍԷՍ Կ
ԱՆԳՆԵՑԻ ՉԽ
ԱՉՍ ԻՄ ԿԵՆԴ
ԱՆՈՒԹԲ Ի ՓՐԿՈՒԹԻ Հ...

Առանձին կանգնած եկեղեցուց հարավ–արևելք՝ մոտ 6 մ հեռավորության վրա գտնվող խաչքարի վրա փորագրված է.

ԹԻԻ ՈՂԱ /1242/
ԵՍ ՅՈՒՆ....
/ԿԱՆԳՆ/ԵՑԻ....

Երկրորդ եկեղեցուն հյուսիսից կցված ավանդատան ներսում գտնվող խաչքարի կողին պահպանվել է հետևյալ արձանագրությունը.

ՅԻ ՉԽԱՉՍ ԵՂԲԱՒՐ.....Ա....Ա.ՀԱ. ԱՅՍ Է.....

Օխտը եղցուց 4–5 կմ հյուսիս–արևելք՝ Պատարա գետի ձախ կողմի բարձր լեռնալանջին են գտնվում միջնադարյան մի բնակատեղի, ընդարձակ գերեզմանոց ու եկեղեցի: Հնավայրը կոչվում է ՕԵՐԱ ՆԱՀԱՏԱԿ: Եկեղեցին կառուցված է մի հրվանդանանման տեղում, որտեղից բացվում է ընդարձակ տեսարան: Հուշարձանն ունի միանավ բազիլիկի հորինվածք, միակ մուտքը բացվում է հարավային ճակատից: Արևելյան և արևմտյան կողմերից ունի դեպի ներս լայնացող մեկական լուսամուտ: Ինչպես Օխտը եղցու հուշարձանները, Օերա Նահատակը նույնպես կառուցված է անտաշ ու կոպտատաշ քարերով ու կրաշաղախով՝ բացառությամբ այն միակ սրբատաշ քարի, որն ագուցված է կառույցի արևմտյան ճակատին, որի վրա պահպանվել է շինարարական արձանագրությունը: Եկեղեցու ավագ խորանը նույնպես, ինչպես Օխտը եղցու բոլոր եկեղեցիներում, լուծված է ուղղանկյան ձևով, որի երկու կողմերից բաց-

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԴԱՐԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ԼԵՌՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Լեռնաշղթա
- Լեռնաճյուղ
- Լեռնաբազուկ
- Գետեր և ջրվեժներ
- Ժայռեր
- Լեռնագագաթներ
- Լեռնանցքներ
- Բնակավայրեր

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

«ԱՄԵՆԱՓՐԿԻՉ» ԵԿԵՂԵՑԻ (XIII դ.)







«ՍԻՊՏԱԿ ՎԵՂ» ՍՐԲԱՏԵՂԻ (մ.թ.ա II–I հազ.–XIII դ.)

«ՕՃԿԱՆ» ՎԱՆՔ ԵՎ ԽԱՉՔԱՐԵՐ (XII–XIII դդ.)





«ԼԵՍՆՈՅ» – «ՋՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ» ՏԵՂԱՄԱՍ

«ՇԵՐԱ ՆԱՀԱՏԱԿ» ԵԿԵՂԵՑԻ, ԳԵՐԵԶՄԱՆՈՑ ԵՎ ԽԱՉՔԱՐԵՐ
(XI–XIII դդ.)





«ԽՐԱՎԱՆԴ» ԵԿԵՂԵՑԻ, ԽԱՉՔԱՐԵՐ (XII–XIII դդ.)

«ՕԽՏԸ ԵՂՑԻ» ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԵՎ ԽԱՉՔԱՐԵՐ



ԲԱԴԱՐԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Եկեղեցի
- Բերդ
- Մատուռ
- Խաչքարերի խումբ
- Հին բնակատեղեր
- Գետեր
- Անտառ և արահետ
- Բնակավայր

M 0 1 2

ՊԱՏԱՐԱՅԻ ԲԵՐԴԸ



«ԿՈՒՍԱՆԱՑ» ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ - ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Եկեղեցի
- Բերդ
- Մատուռ
- Խաչքարերի խումբ
- Գետեր
- Անտառ և արահետ
- Բնակավայր

M 0 1 2 3

վում են փոքրիկ խորշեր: Եկեղեցին, ըստ մուտքի ճակատակալ կոպտատաշ քարի վրա փորագրված արձանագրության, կառուցվել է ՉԼԵ (1326) թ.: Արձանագիր քարի չափերն են 131x26, իսկ շինարարական յոթտողանոց արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

Ի ԿԱՄՍ ԱՑ
Ի ՅԻՇԽԱՆՈՒԹ
ԵԱՆՆ ՍԸՆՊԱՏԱՑ
ԵՍ ՄԽԻԹԱՐ ԵՐԷՑ
ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂՑԻ
Ս ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ
ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԷՔ:

Արձանագիր քարի չափերն են 57X57: Արձանագրությունից պարզվում է, որ եկեղեցին կառուցվել է Սմպատ իշխանի օրոք՝ Մխիթար երեցի պատվերով: Այդ իշխանի մասին այլ պատմագիտական տեղեկություններ չեն պահպանվել: Առավել ևս հայտնի չէ Մխիթար երեցի ով լինելը, որ հիշատակված է արձանագրության չորրորդ տողում: Եկեղեցուն հարավից կից է եղել մի փոքրիկ մատուռ, որը, ցավոք, վերջին տարիներին հիմնահատակ ավերվել է: Եկեղեցուց ոչ հեռու կիսով չափ հողի մեջ խրված պահպանվում է 1246 թ. ութտողանոց արձանագրությամբ մի այլ խաչքար, որի վրա քանդակված են զույգ միանման խաչեր.

ԹԻԻ
ՈՂԵ /1246/
ԷՐ
ԵՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՎ ԵՂԲԱՐՔՍ ԻՄ Կ
ԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ՀԱԻՐ ՄԵՐՈՑ Բ ԱՐՍԵՂԱՑ ԵԻ ԵՂԲԱՒՐ
ՄԵՐ Դ /ԱՆ/
ԻԵԼ... ՊԵՏԻ ՈՐ ՏԱՐ /Ա/
ԺԱՄ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՔՍ.....
ԳԱ... ՄԽԻԹԱՐ...ՈՐ
ԵՄ...ԵՐԿՐ ՊԱԳԷՔ ԱՂԱԻԹՍ
ՅԻՇԵՑԷՔ:

Պարզվում է, որ եկեղեցու տեղում եղել է գերեզմանոց, որի անխոս ապացույցն են մի քանի տասնյակի հասնող արձանագիր խաչքարերը՝ IX–XIII դդ. բնորոշ զարդանախշերով ու ոճով: Մեկ այլ արձանագիր խաչքար ընկած է եկեղեցուց հարավ–արևելք.

ՅԵՍ ՅՈՎԱՆՆԱՅՍ ՇԻՆԵՑԻ
Ե /ԿԵ/ ՂԵՑԻՍ ԵԻ ԿԱՆԳՆԵՑ/Ի/ ԶԽԱՉ
Ս Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ ԻՄՈ ՈՐՔ
/Ը/ ՆԹԵՌՆՈՅՔ ԶԻՍ ՅԱՂԱԻԹՍ
ՅԻՇԵՑԷՔ:

Անթվակիր այս արձանագրությունից պարզվում է, որ Հովաննան կառուցել է մի եկեղեցի ու իր հոգու փրկության համար և ի նշանավորումն եկեղեցու կառուցման՝ կանգնեցրել խաչքարը: Հավանաբար սա այն մատուռն է, որ հարավից կից է Մխիթար երեցի կառուցած եկեղեցուն: Ընդարձակ գերեզմանատան խաչքարերից մեկի վրա կա հետևյալ արձանագրությունը.

ԵՍ Գ
Ր /Ի/ԳՈՐ
/ԿԱՆԳՆԵ/ՑԻ
....ԱԻՐ ԻՄՈՅ.....
.....Ա ՅԻՇԵՑԷՔ.....

Ծերա Նահատակ հուշարձանախմբից 4–5 կմ հյուսիս՝ Պատարա գյուղից մոտ 8 կմ հյուսիս–արևմուտք, բարձրադիր լեռան վրա է ՕՇԿԱՆ վանքը՝ ծածկված խիտ ծառերով ու շրջապատված քարաժայռերով: Հուշարձանը բաղկացած է եկեղեցուց, գերեզմանոցից և ավերակված շինությունից: Եկեղեցին ունի միանավ թաղածածկ բազիլիկի հորինվածք, որի հյուսիսային կողմից արևելք–արևմուտք ուղղությամբ ի սկզբանե կցված են եղել երկու ավանդատներ: Կառուցված է անտաշ քարերով: Նրա ավագ խորանի հյուսիսային կողմի որմի ստորին շարվածքում պահպանվել են հնագույն եկեղեցու քանդակազարդ բեկորները: Արևմտյան ճակատում դրսից ագուցված են եղել մի քանի սպիտակ, սրբատաշ արձանագիր քարեր: Ցավոք, դրանք վերջին տարիներին ջարդվել ու տեղահան են արվել: Պահպանված երեք քարերից երկուսի վրա հազիվ մի քանի տառ է նշմարվում: Դրանցից մեկը, որ ընկած է եկեղեցու ներսում, ընդարձակ արձանագրության միջնաքարերից է: Վերջինիս վրա պահպանվում է հետևյալ արձանագրությունը.

...../ԱՌԱՋՆ/ ՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ Հ.....
.....ԲԿԻՆ ԶԺԱՄՆ:Ժ: /10/ԱԲ.....
.....ԱԲ ԱՐԶՈՒ ԽԱԹՈՒՆ.....Վ
.....ԱԻ ՈՐՔ ՀԱՍՏ....

Արձանագրության երրորդ տողում հիշատակված Արզու Խաթունը Քուրդ Արծրունու դուստրն է, վերին Խաչենի տեր Վախթանգի կինը, որը Դադի վանքում իր զոհված ամուսնու և որդիների հիշատակին 1214 թ. կառուցել է կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցի: Համաձայն այս տվյալների՝ Օծկան վանքը պիտի կառուցված լինի 13–րդ դ. առաջին քառորդում կամ էլ 12–րդ դ. վերջերին: Հուշարձանախմբի շրջակայքում պահպանվել են կիսավեր ու ավերված շինությունների մնացորդներ: Եկեղեցուց արևմուտք տարածվում է պատմական գերեզմանոցը, ուր պահպանվել են մի քանի գեղաքանդակ խաչքարեր ու բեկորներ: Դրանցից մի քանիսի վրա կիսաեղծ վիճակում պահպանվել են արձանագրությունների մնացորդներ.

ԵՍ /Ս/ ՄՊԱՏ ՈՒ Ս
ՈՒԶԱՅ ԿԱՆԳ
ԵՑԱՔ Զ /ԽԱՉ/ Ս
Ի ՏԱՊԱՆԱ....
....ԱԻՐ....

Մեկ ուրիշ խաչքարի վրա՝ երկու տող.

ԵՍ ԱՎԵՏԻՍ ՈՐ /ԴԻ/ ՀԱՍ/ԱՆԱ/
/ԿԱՆԳՆԵՑ/Ի ԶԽԱՉՍ.... Ի ՏԱՊԱՆԻՆ...

Կոտրված խաչքարի վրա՝ վերնամասում եղծված արձանագրության ստորին մասում՝

ԵԻ ՔԱՋ ՊԱՏԵՐԱԶՄՈ/Ղ/:

Այդուհանդերձ, Օծկան վանք–եկեղեցու տարածքի ամենանշանավոր ու ընդարձակ արձանագրությունը, որ տպագրվում է առաջին անգամ, եկեղեցու հարավարևմտյան եզրամասում (մուտքի մոտ) գտնվող 1.6x0.6x0.2 մ չափերի կոտրված խաչքարի արձանագրությունն է.

Ի ԹԻՒ ՈՁԸ: (1229)
ԵՍ ԽՈՒԹԼՈՒԲԷԿՍ: ՈՐԴԻՈ
...ՄԱՆԱՅ ՀԵՋԲԻՆ ՁԱՔԱ/Ր/ԵՒ:
ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ԻՄ
/ՏԱ/ՊԱՆԻ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՅ ԳՐԻԳ
/ՈՐԻՆ/: ՈՐՔ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՔ
.....ՅԱՂԻԱՒԹՍ ՅԻՇԷՔ:

Պատարա գյուղից շուրջ 3 կմ հյուսիս–արևմուտք կանգուն է մեկ այլ նշանավոր հուշարձան՝ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ եկեղեցին կամ, ինչպես տեղացիներն են կոչում, Փրկչի վանքը: Այստեղ, բացի եկեղեցու ինքնատիպ ու հետաքրքիր շենքից, պահպանվում են գյուղատեղիի ավերակները և ընդարձակ գերեզմանոցը՝ բազմաթիվ անարձանագիր տապանաքարերով: Խաչքարերի մեծ մասը խիստ քայքայված ու հողմնահարված է: Նույն վիճակում է եկեղեցու բարավորի քարը, ուր, հավանաբար, եղել է արձանագրություն: Եկեղեցին ունի բազիլիկի հորինվածք. արևելքում ավագ խորանն է, որին երկու կողմերից կից են ոչ մեծ ավանդատները: Արևելյան ճակատում արտաքինից կան երկու եռանկյուն խորշեր, որոնք ձգվում են ամբողջ շենքի բարձրությամբ: Տաճարի, որն ունի երկու՝ հարավային և արևմտյան կողմերից բացվող մուտք, պատերը կառուցված են կոպտատաշ, իսկ որմնասյուներն ու շենքի անկյունաքարերը՝ տեղական սրբատաշ դեղնասպիտակավուն չեչ քարից: Հարավային մուտքի մոտ երեսով դեպի արևմուտք կանգուն է մի մեծ խաչքար, որի ստորին մասում զինավառ հանդերձներով հեծյալի քանդակ է: Եկեղեցու ավագ խորանի ճակատային վեց քարերի վրա համաչափ ու մեծադիր տառաձևերով փորագրված է շինարարական արձանագրությունը, որից պահպանվել են ստորին երեք տողն ու վերին չորրորդ տողի որոշ հատվածներ: Սա հուշարձանի տարածքում պահպանված գլխավոր արձանագրությունն է, որն առաջին անգամ հրատարակել է Մ. Բարխուտարեանցը, վերահրատարակել Ս. Բարխուդարյանն ու

Ս. Կարապետյանը. ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ Տ/Է/Ր... ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԶԴԱՐԱՊԱՍ ՆԿԱՐԱՔ...ՈՒԽԱՆԻՆ ՄԵԾՈՒՆԻՔՆ ՅԻՍ ՏՎԻՆ ԱՐԴ ԾՆՆԴԵԱՆ :Ը: ԱԻՐԷՔՆ ԵԻ ԱՂՈՒՀԱՅԻՑ ՏԱԻՆԵՐՆԵԻ Ի ԶԱՏԿԷՆ ԻՆՁ ՈՒ ՆՈՐ ԿԻՐԱԿԻՆ ԶՊԱՏԱՐԱԳՆ ՄԵՋ ԱՌՆԵՆ ԴԱՐԱՊԱՍ ՎԱՃԱՌՆ ՀՈՒՌԱՀՈԱՏՆԵՐՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ: Մ. Բարխուտարեանցը եկեղեցու պատի մեջ ագուցված մի խաչքարի վրա տեսել է նաև հետևյալ արձանագրությունը. ԱԹԱՆԱՍ Է. ՆԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ Է ԱՐԲԱԻՆ: Լեսնոյ (Դարպասուտ) գյուղատեղիից 6–7 կմ հյուսիս–արևմուտք՝ բարձրադիր անտառապատ բլրի գագաթին է գտնվում ԽՐԱՎԱՆԴ եկեղեցին, որից հյուսիս՝ հոգևոր մեկ այլ ավերակված շինություն (հավանաբար սեղանատունը), և բավականին ընդարձակ գերեզմանոցը՝ խաչքարերով, որոնք դեռևս ուսումնասիրված չեն: Եկեղեցին գտնվում է կիսավեր վիճակում, ինչպես պարզվում է մուտքի վրա և այլ հատվածներում ագուցված խաչքարերի ուսումնասիրությունից, կառուցվել է 12–13–րդ դարերում: Երկու տասնյակի չափ խաչքարեր են պահպանվում նաև գերեզմանատանը, որոնցից սակայն արձանագիր է մեկը: Գերեզմանատան հարավային եզրամասում գտնվող (1,8x0,7x 0,5 մ չափերի) խաչքարի վրա զետեղված է հետևյալ արձանագրությունը. ԹՎ ՈԾԲ /1203/ ԵՍ ԳՈՐԳ ԿԱՆԳՆԵՑԻ /Զ/ ԽԱՉՍ: Լեսնոյ գյուղատեղիից մոտ 2 կմ արևմուտք և հյուսիս-արևելյան եզրամասում են գտնվում Դրպասուտ եղցի և Զուխտակ եղցի հուշարձանները, որոնցից վերջինս հայտնի է իր թեև անարձանագիր, բայց բավականին մեծաչափ և պատմամշակութային արժեք ունեցող կոթող–խաչքարերով, որոնք մանրամասն ուսումնասիրության կարիք են զգում: Մեկ տասնամյակի չափ խաչքարեր են պահպանվում նաև Կըրխկըզ հորջորջվող, իրականում Կուսանաց լեռների ստորոտում, որոնք նույնպես ուսումնասիրության կարիք ունեն: Պատարա գետահովտի ամենանշանավոր հուշարձաններից է ԲԵՐԴԸ, որը գտնվում է Պատարա գյուղից մոտ 2 կմ հարավ–արևմուտք՝ համանուն գետի աջափնյակում վեր խոյացած, ծովի մակերևույթից 1353 մ բարձրությամբ ժայռի վրա, որն ունի հյուսիս–հարավ ուղղվածություն: Բնականաբար, նման խտաբնակ շրջանը պետք է ունենար պաշտպանական կառույցներ և հոգար ոչ միայն իր պաշտպանության մասին, այլև վտանգի դեպքում ահազանգեր լեռնային բարձունքներում ծվարված մյուս ամրոցներին: Ամրոց–լեռնագագաթը զբաղեցնում է 200 քառ. մետրից քիչ ավելի մակերես (չափերը՝ 24 x 9 մ): Տեղանքը հիմնականում անհարթ է, խորդուբորդ՝ դեպի հարավ

իջվածքով ու թեքությամբ: Ժայռագագաթը գրեթե բոլոր կողմերից շրջափակված է եղել 1,2 մ հաստությամբ պարսպապատերով, որի 70 տոկոսը պահպանվում է կիսավեր: Համեմատաբար լավ վիճակում են արևելյան, հարավարևելյան հատվածները: Արևելակողմի պատն ունի 7 մ երկարություն և 1,8 մ բարձրություն: Պարսպի ստորին մասում 1,1 մ լայնությամբ բացված է կամարակիր անցք, որը նման է Կաչաղակաբերդի նույնատիպ անցքին: Սակայն եթե Կաչաղակաբերդում այն ծառայում էր հիմնականում որպես քարեր գլորելու «կրակակետ» (նկատի ունենալով դեպի ամրոցամուտք եղած նրա տեղադրությունը), ապա այստեղ, կարծում ենք, դրա անհրաժեշտությունը չկար, քանի որ այդ հատվածից ամրոցը լիովին անմատույց է՝ պաշտպանությունն ապահովված բնականորեն: Այստեղ այն, կարծում ենք, ծառայել է իբրև գաղտնուղու մուտք: Պաշարման դեպքում կարելի է այդտեղից աննկատ դուրս գալ, անսպասելի հարվածել թիկունքից, հարկ եղած դեպքում՝ նահանջել կամ ջրի պաշար վերցնել: Ի դեպ, ներկայումս տիրում է այն կարծիքը, թե բերդից մինչև գետ գոյություն ունի ստորգետնյա ուղի, որից օգտվել են ամրոցի պաշտպանները: Այդպես են կարծում ոչ միայն տեղի բնակիչները, այլև ժամանակակից առանձին հեղինակներ՝ հենվելով Մ. Բարխուտարյանցի հաղորդած տեղեկության վրա՝ «գյուղի հարավային հանդէպ գետակի աջ կողմում մի լեռնակի գլխին փոքրիկ և հին բերդակ, որից գետնափոր ական կայ մինչև գետակն»: Սակայն մեր կողմից կատարված տեղազննության ընթացքում նման անցք չի հայտնաբերվել: Կարծում ենք, ամրոցից մինչև գետ (1,5 կմ) գետնափոր ական հազիվ թե լիներ: Հնարավոր չէ մի ողորկ քարաժայռ փորել այդքան երկարությամբ: Սովորաբար Արցախի գրեթե բոլոր բարձրադիր (այդ թվում ավելի հզոր) ամրոցներում կառուցվում են ջրամբարներ, որտեղ հեղուկը կուտակվում էր անձրևաջրերից կամ ձնհալքերից: Չի բացառվում նման ջրամբարի առկայությունը նաև այս ամրոցում, սակայն ներկայիս վիճակը (ավերված ու մացառուտներով ծածկված) հնարավորություն չի տալիս պարզելու խնդիրը: Չեն նշմարվում նաև կացարանները, որից կարելի է եզրակացնել, թե ամրոցը մշտապես բնակեցված չի եղել, և միայն վտանգի դեպքում են մարդիկ պատսպարվել այստեղ՝ դիմագրավելով թշնամուն: Խաղաղ պայմաններում այն ծառայել է որպես դիտակետ՝ հսկելով Պատարայի գետահովիտը, ընդհուպ մինչև Կարկառի մերձակա տարածքները, մասնավորապես Խաչենի իշխանության վարչական կենտրոն կամ

Խաչենագետի հովիտ տանող ուղին: Ամրոցի մուտքը արևմտյան կողմից ավերված է: Նրա և հարակից պարսպապատի քարերը թափված են արևմտահայաց լանջին: Դատելով ամրոցի հատակագծային հորինվածքից և շինարարական առանձնահատկություններից՝ այն պետք է վերագրել 12–13–րդ դարերին: Մի նկատառում ևս. հեղինակները և ընդհանրապես այս ամրոցով հետաքրքրվողները հուշարձանը կոչում են Պատարայի բերդ կամ պարզապես Բերդ՝ առանց որոշակի անվան: Ելիզավետպոլի նահանգի 1904 թ. քարտեզում ամրոցին մերձ առկա է Гасмахперт տեղավայրը, որը, կարծում ենք, ամրոցի հնագույն անվան աղավաղումն է: Ելնելով տեղանունների ձևավորման առանձին սկզբունքներից՝ այս առաջին հայացքից անիմաստ անվանումը ստուգաբանվում է. «գաս» (համապատասխանում է հայկական և օտար աղբյուրներում հիշատակվող «կաս», «քաս», «խաս» և այլ բառերին) նշանակում է սուրբ, պաշտամունք և այլն: «Մախ»–ը (ռուսերեն) պետք է ուղղել «մահ», իսկ «պերտ»–ը «բերդն» է: Այսպիսով՝ այս անվանումը պետք է սրբագրել «Քասմահբերդ» (այսինքն՝ «Սուրբմահբեր» կամ «Սուրբ զոհաբերդ»): Ի դեպ, վերջերս տեղեկացաք, որ գյուղում պահպանվում է ամրոցի կործանման հետ կապված մի ավանդություն, ըստ որի՝ բերդի պաշտպանները, չդիմանալով թշնամու գրոհներին, պատսպարվում են ստորգետնյա գաղտնուղու մեջ, որը հայնաբերում է թշնամին, երկու կողմերից խցանում ելքն ու մուտքը, ուր նահատակվում են պաշտպանները: Այս ավանդությունը ինչ– որ չափով լրացնում է վերոհիշյալ ստուգաբանության ճշմարտացիությունը, թեև, վերակրկնում ենք, բուն բերդից դեպի գետը ստորգետնյա ուղի գոյություն չունի: Արցախում բազմաթիվ լեռներ, գետեր, անգամ հանդամասեր սրբացված են եղել և պաշտվել ժողովրդի կողմից զոհեր մատուցվելով: Կարծում ենք, այս ժայռը ևս սրբացված է եղել հեթանոս նախնիների կողմից, և զոհամատույցի արարողության անվանումն անցել է ամրոցին: Չի բացառվում նաև ոչ երկրորդական մեկ նույնիմաստ ստուգաբանում՝ «Գասմախ»–ը դիտելով «Գասբագի» (հմմտ. Կազբեկ) ձևափոխության «բագ» – «աստված» իմաստով, «սուրբ», «աստվածային» նշանակությամբ: Ելնելով վերոհիշյալից՝ «Պադարայի բերդ»–ը կարելի է վերջնականապես անվանել «Կատաբերդ» (կուսաբերդ–սուրբ բերդ) կամ «Զոհաբերդ» (հմմտ. Մահկանաբերդ Գուգարքում): Հարկ է նշել նաև, որ քրիստոնեական քարոզչության և ընդհանրապես հոգևոր կենտրոնները (տվյալ դեպքում՝ Պատարան) չեն կազմակերպել պա-

տահական վայրերում, այլ նախկին հեթանոսական պաշտամունքային կենտրոններում: Ամրոցակալ ժայռի հարավարևմտյան եզրին գտնվում է կիսավեր, անտաշ ու կոպտատաշ քարերով ու կրաշաղախով 6,4x4,4 մ չափերի մատուռ, որը կառուցվածքով բերդի ժամանակակիցն է: Պատերը պահպանվում են 2,5–3 մ բարձրությամբ: Մուտքը հարավ–արևմուտքից է՝ 1,3 մ լայնությամբ: Հետևաբար ժողովուրդն այստեղ ոչ միայն պատսպարվել, այլև բավարարել է հոգևոր–պաշտամունքային պահանջները:

ՑԱՆԿ*

Պատարա գետահովտի պատմության և մշակույթի հուշարձանների

Գ. Պատարա

1. Եկեղեցի Ս. Աստվածածին
2. Եկեղեցի

Լեսնոյ (Դարպասուտ) գյուղատեղիի շրջակայքը

1. Եկեղեցի *Դրպասուտ եղցի*
2. Գավիթ
3. Եկեղեցի *Ջուխտակ եղցի*
4. Եկեղեցի
5. Խաչքար
6. Խաչքար
7. Խաչքար
8. Խաչքար
9. Խաչքար
10. Խաչքար
11. Խաչքար *Լեսնոյ*

* Ներկայացվող ցանկը վերջնական չէ: Այն ավարտուն տեսքի կբերվի ընթացիկ տարում, երբ ավարտվեն տարածքի հուշարձանների հաշվառման աշխատանքները, որոնց ընթացքում, հուսով ենք, ի հայտ կբերվեն թավուտ անտառներում ու լեռների ծերպերում «թաքնված» նոր հուշարձաններ, հատկապես հնագիտական, որոնք տվյալ ցուցակում գրեթե չեն ներկայացված:

Օխտը եղցի տեղավայր

12. *Օխտը եղցի* վանական համալիր
13. Եկեղեցի
14. Եկեղեցի
15. Եկեղեցի
16. Սեղանատուն
17. Տապանատուն
18. Կից շինություններ
19. Գերեզմանոց
20. Գյուղատեղի
21. Խաչքար
22. Խաչքար
23. Խաչքար
24. Խաչքար
25. Խաչքար
26. Խաչքար
27. Խաչքար
28. Խաչքար
29. Խաչքար
30. Խաչքար
31. Խաչքար
32. Խաչքար
33. Խաչքար
34. Խաչքար
35. Խաչքար
36. Խաչքար
37. Խաչքար
38. Խաչքար
39. Խաչքար
40. Խաչքար
41. Խաչքար
42. Խաչքար
43. Խաչքար
44. Խաչքար
45. Խաչքար
46. Խաչքար
47. Խաչքար
48. Խաչքար
49. Խաչքար
50. Խաչքար
51. Խաչքար
52. Խաչքար
53. Խաչքար
54. Խաչքար
55. Խաչքար
56. Խաչքար
57. Մատուռ
58. Գերեզմանոց
59. Խաչքար
60. Խաչքար
61. Խաչքար
62. Խաչքար
63. Խաչքար
64. Խաչքար
65. Խաչքար
66. Խաչքար

Ծերա նահատակ տեղավայր

67. Եկեղեցի *Ծերա նահատակ*
68. Գյուղատեղի
69. Գերեզմանոց
70. Խաչքար
71. Խաչքար
72. Խաչքար
73. Խաչքար
74. Խաչքար
75. Խաչքար
76. Խաչքար
77. Խաչքար
78. Խաչքար
79. Խաչքար

80. Խաչքար
81. Խաչքար
82. Խաչքար
83. Խաչքար
84. Խաչքար
85. Խաչքար
86. Խաչքար
87. Խաչքար
88. Խաչքար
89. Խաչքար
90. Խաչքար
91. Խաչքար
92. Խաչքար
93. Խաչքար
94. Խաչքար
95. Խաչքար
96. Խաչքար
97. Խաչքար
98. Խաչքար
99. Խաչքար
100. Խաչքար
101. Խաչքար
102. Խաչքար
103. Խաչքար
104. Խաչքար
105. Խաչքար

Խրավանդ տեղավայր

106. Եկեղեցի *Խրավանդ*
107. Սեղանատուն
108. Գերեզմանոց
109. Գյուղատեղի
110. Խաչքար
111. Խաչքար
112. Խաչքար
113. Խաչքար
114. Խաչքար
115. Խաչքար
116. Խաչքար
117. Խաչքար
118. Խաչքար
119. Խաչքար
120. Խաչքար
121. Խաչքար
122. Խաչքար
123. Խաչքար
124. Խաչքար
125. Խաչքար
126. Խաչքար
127. Խաչքար
128. Խաչքար
129. Խաչքար
130. Խաչքար

Դրպասուտ – Գետնի եր–Կետասպերք տեղավայր

131. Գյուղատեղի
132. Գերեզմանոց

Կուսանաց – Կենդակ տուն տեղավայր

133. Խաչքար
134. Խաչքար
135. Խաչքար
136. Խաչքար
137. Խաչքար
138. Խաչքար
139. Խաչքար
140. Խաչքար
141. Խաչքար
142. Խաչքար

Կուսանաց – Մեյդան – Շլորուտ տեղավայր

143. Խաչքար
144. Խաչքար
145. Խաչքար
146. Խաչքար
147. Խաչքար
148. Խաչքար
149. Խաչքար

Պատարայի բերդ – Ուզունտեղեր հատված

150. Պատարայի բերդ
151. Գերեզմանոց
152. Եկեղեցի
153. Գյուղատեղի

Տանձու բաղ տեղամաս

154. Գերեզմանոց
155. Խաչքար
156. Խաչքար
157. Խաչքար
158. Խաչքար
159. Խաչքար
160. Խաչքար
161. Խաչքար
162. Խաչքար
163. Խաչքար
164. Խաչքար
165. Խաչքար
166. Խաչքար
167. Խաչքար
168. Խաչքար
169. Խաչքար

Պատարա – Սիպտակ վեղ տեղավայր

170. Եկեղեցի *Ամենափրկիչ*
171. Գերեզմանոց
172. Աղբյուր
173. Տապանաքար
174. Խաչքար
175. Խաչքար
176. Խաչքար
177. Խաչքար
178. Խաչքար
179. Խաչքար
180. Խաչքար
181. Խաչքար
182. Խաչքար
183. Խաչքար
184. Խաչքար
185. Խաչքար
186. Խաչքար

Օծկան տեղավայր

187. Վանք–եկեղեցի *«Օծկան»*
188. Սեղանատուն
189. Խաչքար
190. Խաչքար
191. Խաչքար
192. Խաչքար
193. Խաչքար
194. Խաչքար
195. Խաչքար
196. Խաչքար
197. Խաչքար
198. Խաչքար

Ընդամենը՝ 200 հատ

ՊԱՏԱՐԱ

ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՅՈՒՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Համակարգչային ձևավորումը՝ Վիտալի Ասրինի
Սրբագրությունը՝ Ազնիվ Նասլյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 1.5 տպ. մամուլ + 1.25 մամուլ կավճ. ներդիր:
Տպաքանակը՝ 300 օրինակ:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28
Ֆաքս՝ (+37410) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am

www.zangak.am